տարօրի երազ. Յանկարծ այս երեւոյթի մէջ մի առարկայ երեւեցաւ. սոցա նաւակը սաստիկ ալէկոծութենից տատանվելով հրուանդանի մօտով ան-ցաւ և մօտեցաւ ափին. Զարդած նաւի կողոպտողները յանկարծ սկսեցին փախչել, այնուհետև կրակ երեւեցաւ մաքսատան նաւից, այս նոր նաւը գալուն պէս ճանաչեցի, նորանից սկսեցին հրացան արձակել ափի մօտ գտնված մարդիկների վերայ. Մեծ նաւից ցած իջեցրին փոքրիկ նաւակ, որը մեծ դժուարութեամբ մօտեցաւ ափին և սկսվեցաւ սարսափելի կռիւ, մութ գիշեր. լսվում էր միայն նոցա աղաղակը և հրացանաձգութեան ձայնը.

Ես գրեթէ ուշաթափ ընկած էի ժայռի վերայ, երբ քամին ինձ մի ձայն հասցրեց, նա լսվում էր սարի գագաթից, այդ միջոցին փայլող կրակը վար էր իջնում և շուտով նկատեցի, որ այն լապտեր էր և ես մի նշանաբան համարեցի. Կէս ժամ անցած, ինձ մօտ վայր թողին պարան, որի ծայրից կապված էր օղակ, ես գօտիկս կապելով օղակից զգացի որ ինձ բարձրա-ցնում էն. Շատ շուտով ես հասայ ժայռի գագաթին Ռօբսըն ծովապետի (որ մաքսատան նաւի նաւապետն էր) և քանի մի անձների ներկայութեամբ, որոնց մէջ ես ճանաչեցի Գէճ Բէօրլէն շղթայակապված, որի վերայ մաք-սատան երկու ծառաներ պահապան էին կարգված. Երբ նորան ժայռի ստո-րոտում կալանաւորել էին, նա հաղորդել էր իմ գրութեանս մասին և նա էր առաջնորդել իմ ազատողներին. Մաքսանենգներից շատերը ծանր վիրաւորվել էին և երկուքը սպանվել, մէկը փախել էր, իսկ մնացած-ները դատաստանի ենթարկվեցան և վճռեցին նոցա աքսորել մինչև ի մահ արքունի հանքերում մշակելու. Հրացանի առաջին հարուածից սպան-վել էր Ալլէն Ռօբէօֆը.

(Թարգմ.) Գ. Վ. Սար.

ԼՕՆԴՕՆ. (ԱՐԱՐԱՏ, № 3).

Նկարագրենք սակաւ ինչ և Լօնդօնի ներքին տեսարանները. Լօնդօնը բաղկանում էր 36 զանազան արուարձաններից, որոնք երբեմն բոլորովին բաժանված էին, իսկ այժմ այս բոլորը միացած, կազմում են մի ահագին քաղաք. Սոցանից միայն մինն է կրում տիրապէս Լօնդօն քաղաքի անու-նը, այն է Սիտին (City of London). Սիտին, որ գտնվում է Տէմզայի ձախ ափին, համարվում է գլխաւոր վաճառատեղ և վաճառների համբարանոց. Նա ոչ միայն կեդրոնն է Լօնդօնի վաճառականութեան, այլև Լօնդօնի հարստութեան գանձարան է. Բաւական է միայն յիշել Սիտին, ածուխի, երկաթի, չուխայի, մի խօսքով բոլոր անգլիական ձեռակերտութեան մա-սին գաղափար կազմելու համար. Ամեն ինչ այստեղ վեհ, գեղեցիկ և ահագին է, թէ շինութիւններ, թէ փողոցներ և թէ խանութիւններ. Սիտիի տների մեծ մասը շինված են սորանից հարիւր տարի և աւելի ա-

ռաջ։ Գոյնզգոյն դրուագներ պատումն ամբողջապէս տների ճակատները, ահագին պատուհաններ զարդարված են վաճառելու նիւթերով։ Քանի մի տներ ծածկված են նշանակներով գրեթէ վերից վար։ Այն վաճառականները, որոնց խանութները և հաշուարանները գտնվումն այստեղ, իւրեանք բնակումն մայրաքաղաքի բոլորովին ուրիշ մասերում։ Այստեղ հաւաքվումն մարդիկ միայն փող շահելու և աշխատելու համար, բայց ամեն աստիճանի անձն փախչումէ այստեղ ապրելուց։ Անգլիայի մայրաքաղաքը երկու մասերից է բաղկանում. Վէստ—Էնդից, արևմտեան մաս և Օստ—Էնդից, արևելեան մաս։ Քաղաքի ամենալաւ, ամենափառաւոր մասը Վէստ—Էնդն է։ Այստեղ կան կեանքի համար ամենայն յարմարութիւններ։ Այստեղ են հարուստների և մեծամեծների տներ։ Այս մասն աւելի առողջ պահելու համար գիւղական կեանքի պայմանները միացրած են այստեղ քաղաքային կեանքի հետ, այստեղ տնկված են պարտէզներ, անտառներ, կան կանաչ դաշտեր։ Փողոցները լայն են և մաքուր։ Մայրաքաղաքի այս մասը տեսնողը կարող է կարծել թէ Լօնդօնը առողջարար և հոյակապ քաղաք է։ բայց բոլորովին սխալված կլինի։ Լօնդօնը կատարելապէս հակառակ ղիրքերով և պայմաններով քաղաք է. անհաւասար հարստութեան կողքին կտեսնէք ամենազարհուրելի և ամենազզուելի աղքատութիւն։ Օրինակելի տների կողքին, փառաւոր փողոցների և հրապակների մօտ, կտեսնէք կիսաւեր խրճիթներ, առանց սալայատակի և չլուսաւորված փողոցներ, վարակված կոյափողրակներ, որտեղ ոչ ոք բացի Լօնդօնցիներից չէր կարողանայ բնակել, և որոնց նմանը, պատիւ մարդկութեան ասած լինինք, ուրիշ ոչ մի տեղ չկայ։ Բայց շարունակենք մեր խօսքը։ Առաւել նշանաւոր դրամաւորները բնակումն կամ Վէստ—Էնդում, կամ Լօնդօնի շրջակայքում ունեցած իւրեանց շքեղ տներում։ Նոքա թողնումն իւրեանց բնակութիւնը առաւօտեան վաղ որպէս զի երեկոյեան վերադառնան տուն, չնայելով, որ իւրաքանչիւր օր երկաթուղով գնալ գալու համար կորցնումն երկու, երեք ժամ։ «Ժամանակը փող է» ասումն Անգլիացիներ, բայց գնալ գալու համար գործածված ժամանակը կորցրած չեն համարում։ Անդադար զբաղմունքը, ձիով և ոտով շրջելը սաստկացնումն արիւնի շրջագայութիւնը, որ անհրաժեշտ է Սիտիի վաճառականների նստական կեանքին։ Այս բոլորը ամրացնումէ ջղեր և մարմնական առողջութիւն, որն Անգլիացին փող շահելու համար գլխաւոր լծակ է համարում։

Աւելի պարզ հասկացողութիւն կազմելու համար Լօնդօնի փողոցների, աղաղակների և շարժիւնի մասին, հարկաւոր է յիշել որ մայրաքաղաքում գտնվումէ մօտ 4 միլլիոն ժողովուրդ։ Ոչ մի մայրաքաղաք աշխարհիս երեսին չէ կարող պարծենալ բնակիչների այսպիսի բազմութեամբ։ Քաղաքի բոլոր մասերում բնակութիւնը արագ բազմանումէ բացի Սիտիից, ուր ընդհակառակն բնակիչների թիւը նկատելի կերպով օրէց օր պակասումէ, որովհետև այստեղի նախկին բնակիչները փոխադրվումն անդադար ուրիշ

տեղ և Սիտին հետզհետէ դառնում առևտրական ընկերութիւնների հաշուարանների կուտվելու տեղ։

Անդադար և արագ մեծանալուն համաձայն, առանց դորան էս ահագին մայրաքաղաքը հետզհետէ իր ծաւալովն էս ընդարձակվում։ Երկու, երեք ամսում դատարկ տարածութիւնները դառնումեն ամբողջ մի քաղաք լայն փողոցներով, ահագին շինութիւններով և խանութներով։ Զարմանալի է, որ թէպէտև Լոնդոնի առևտրական գործերը գլխաւորապէս կեդրոնացած են Սիտիի հաշուարաններում, սակայն աւելի կամ պակաս ծաւալված են ամբողջ քաղաքում, այնպէս որ ամենահեռաւոր փողոցներում անգամ խանութները և մագազինները ունին այն ամենը և նոյնպէս փառաւոր են ինչպէս և մայրաքաղաքի լաւ փողոցներում, Պիկադիլլում կամ թէ Էնտ—ստրիտում։

Լաւ հասկացողութիւն կազմելու համար այս քաղաքի մեծութեան վերայ, հարկաւոր է յիշել որ նա բռնած է 50 անգլիական քառակուսի մղոն տարածութիւն և բովանդակում իր մէջ մօտ 10 հատ ահագին առտառներ, երկու հարիւրից աւելի պարտէզով հրապարակներ, 13,000 աւելի փողոցներ, մանր փողոցներ, ծառաստաններ, սալայատակ ծովեզերեայ ճանապարհներ, հրապարակներ և 360,000 աւելի տներ։

Ամեն տարի հետզհետէ մեծացող, մայրաքաղաքի բնակիչների ահագին բազմութիւնը ապագայում սպառնումէր բոլորովին խլացնել բնակիչներին զարհուրելի և անդադար աղաղակներով։ Փողոցների շարժողութիւնը, մանաւանդ Սիտիում, մարդիկների այնտեղ զբաղելու միջոցին, 15 տարի սոքանից առաջ, այն աստիճանին սաստկացաւ, որ բոլորովին անկարելի էր լինում շարժել, այնպէս որ կառքերը և ոտով գնացողները ստիպված էին սպասել կէս ժամ, որ կարողանան փողոցից անցնել։ Լոնդոնի փողոցների շարժողութիւնը հասկանալու համար բաւական է բերել միայն երկու փաստ։ Ամեն օր, բացի տօն օրերից, որոշված ժամում, քաղաքի իւրաքանչիւր ծայրերից դէպի Սիտի և այնտեղից կրկին յետ, գնումեն մօտ կէս միլիոն սեղանաւորներ, վաճառականներ, գործակալներ, գրագիրներ և ընդհանրապէս այնպիսի մարդիկ, որոնք յարաբերութիւն ունին առևտրական գործերի հետ։ Միւս կողմից, պաշտօնական կերպով եղած հաշիւներին նայելով դեռ էս 1860 թ. Լոնդոնի մի կամուրջի վերայից միայն անցած դարձած են, մի օրում մօտ 170,000 մարդիկ և կառքեր։ Վերջապէս Անգլիացիները սկսեցին մտածել մի կերպով տեղ ձեռք բերել որ կարողանան արձակ շարժել, հաղորդակցութիւն ունենալ միմեանց հետ և աւելի աղատօրէն վայելչութիւններ ունենալ։ Սորա համար մի ուրիշ միջոց չգտան, բացի Տէմզայի տակ, տուننել բանալուց, քաղաքի տակ մի ուրիշ քաղաք հիմնել, փողոցների տակ փողոցներ ձգել, երկաթուղի շինել նախ գետնի վերայ, միւսը տների վերայ և երրորդն էս գետնի տակ։ Ամենաշքեղ, թէև ոչ շատ ընդարձակ, Լոնդոնի «Կրիտերիոն» թատրոնը, որի բացվելը երկու տարուց աւելի չէ, կառուցված է գետնի տակ։

Արուեստանոցներ՝ ամբարներ՝ միջին կարողութեան տէր մարդիկների սեղանատներ՝ խոհանոցներ—շինված են գետնի տակ։ Իւրեանց մայր եկեղեցիների և գերեզմանատների տակ Անգլիացիները բացած են ուրիշ ստորերկրեայ գերեզմանատներ։ Եթէ անգլիացիները գետնի տակ վճռեցին իջնել՝ ուրեմն գետնի վերայից ջնջումն և մաքրումն ի հարկէ այն բաները՝ որոնք կարող են մեծացնել քաղաքի տարածութիւնը՝ այսինքն՝ բազմաթիւ նոր փողոցներ շինեցին՝ լայնացրին հները՝ բազմացրին կամուրջների թիւը՝ շինեցին նոր սալայատակներ և անցքեր մի փողոցից դէպի միւսը՝ կամուրջների տակով։ Մի տարօրինակ ճարտարապետութեամբ են շինվում նոր սալայատակները և մայթերը։ Նոքա այնպէս պինդ են՝ որ ոչ մի ցնցում չէ ազդում նոցա վերայ՝ որով որոշվումն միւս քաղաքների և մինչև անգամ նորոգված Փարիզի մայթերից։ Ամենածանր սայլեր անցնելիս՝ ոտով գնացողը ոչինչ ցնցում չէ զգում իւր ոտների տակ։ Բայց ամենից նշանաւորն այն է՝ որ Լօնդօնի անդադար նորոգ շինութիւնները և մայթելու եղանակը այնպէս են՝ որ փոշի չեն յարուցանում՝ չեն խանգարում երբէք փողոցային կեանքը։ Ոչ միայն կարողանումն յաղթել ամեն արգելքներին՝ այլև աշխատութիւնն այնպէս հանդարտութեամբ և լռութեամբ է լինում՝ որ մերձաւոր դրացին անգամ չէ իմանում թէ իւր մօտ կամ նոցա տակ մի վիթխարային աշխատութիւն՝ մի ահագին ձեռնարկութիւն է կատարվում։ Նա օրինակ տեսնում է որ շոգու մեքենան դրված է մի տեղ ջրհոր փորելու համար՝ տեսնում է որ բարձրացնումն վերև կաւ և քարի փշրանք՝ բայց այս բոլորը սակաւ քանակութեամբ է և միևնոյն ժամանակ փողոցի մէջի շարժողութիւնը չէ դադարում։ Երբ աշխատութիւնը վերջացնումն մի տեղում՝ մեքենան տեղափոխումն մի ուրիշ նշանակված տեղ. եւ այսպէս բոլոր ստորերկրեայ աշխատութիւնները կատարվումն առանց տեսնվելու և առանց մի որևիցէ շփոթի։ Իրաւ է՝ Լօնդօնում այդպիսի նշանաւոր ստորերկրեայ աշխատութիւններ շատ են կատարված՝ բայց չէ եղած օրինակ՝ որ ամբողջ փողոց բանալիս մայրաքաղաքի այս կամ այն մասի մէջ եղած հաղորդակցութիւնը կտրէին։

Դժուար է երևակայել թէ ինչպիսի դժուարութիւններին հանդիպեցան ստորերկրեայ երկաթուղին շինելու ժամանակ։ Քաղաքակրթութեան այդ հրաշքը լաւագոյն ապացոյց է Անգլիացիների գերօրինակ ձեռնարկական ոգուն՝ նոցա երկաթեայ կամքին՝ համբերութեան և երկրի անհամար հարստութեան։ Երկրի տակ երկաթուղու ճանապարհ բանալը անհամեմատ աւելի դժուար էր քան թէ երկրի վերայ։ Հասկացողութիւն կազմելու համար այն դժուարութիւնների մասին՝ որոնց Լօնդօնում իւրաքանչիւր ստորերկրային աշխատութիւնը հանդիպումէ՝ հարկաւոր է յիշել՝ որ գետնի տակ բացի շինութիւնների խորաձիգ հիմքերից՝ գանվումն և ջրմուղներ՝ գազափողրակներ՝ հեռագրական երկաթեայ թելեր և ուրիշ բազմաթիւ զանազան տեսակ խողովակներ և երկաթեայ թելեր։ Ստորերկրեայ երկաթուղու ճանապարհը բանալիս ոչ միայն զգուշութիւն էին գործ դնում՝ որ

չլինի թէ այս փողրակներից մին վնասվի, այլև դեռ իրեանց աշխատութիւնն առաջ շտարած ստիպված էին ամրացնել կամարներով այն տեղերը, որոնք թոյլ էին երևում։ Ստորերկրային Լոնդոնը ինչպէս և մարդկային մարմինը, լցված է երակներով և շնչերակներով և թէ մին և թէ միւս դէպքում սոցանից մինի կարվելն կարող է մահ յառաջացնել։ Ջրմուղներ, կոյսափողրակներ, գազային խողովակներ, հեռագրական երկաթեայ թելեր, այս ամենը նոյնպէս մատ են միմեանց, ինչպէս երակներ, ջղեր, շնչերակներ և նեարդեր։ Ստորերկրային երկաթուղու ճանապարհի ճարտարապետները մի կողմ տանելով եղած խողովակները և ջրանցքները, նոր ստորերկրային անցքին տեղ տալու համար, ստիպված էին գործ դնել այնպիսի զգուշութիւններ, ինչպէս որ վիրաբոյժը բժշկութեան միջոցին։ Ամենափոքր անզգուշութիւնը կարող էր փչացնել արդէն աւարտված աշխատութիւնները, որով ձեռնարկողների 100,000 գրվանքա ստերլինգը իզուր տեղը կգնար։ Հարիւրաւոր աշխատաւորներ այս աշխատութեան ժամանակ անց էին կացնում շաբաթներով շարունակ գիշեր և ցերեկ խոնաւութեան մէջ, որոնք վերջը չէին կարողանում կօշիկներն հանել և հարկադրված էին նոցա կըտրել ոտների վերայ։

Ստորերկրային երկաթուղին երկու շրջան ունի. մին ըմբռնում է բոլոր ներքին քաղաքը Հայթ-պարկով միասին, իսկ միւս մեծ շրջանը պատում է նաև արուարձանների շուրջ։ Բացի դորանից այդ երկաթուղու ճանապարհները կտրում են միմեանց և ամենուրեք խառնվում են այն ճանապարհների հետ, որոնք դէպի շրջականներն են գնում։ Բոլոր նոցա տարածութիւնը հասնում է մինչև 100 վերստի։ Փողոցների, նշանակների վերայ և նշանաւոր տեղերում գրված է այսպիսի վերնագիր «դէպի կայարանը», որի մատ երևում է մատի ձև։ Գնացէք այդ ուղղութեամբ և դուք իսկոյն կգտնէք կայարանը, որոնք շինված են քաղաքի ամեն նշանաւոր տեղերում և մեծ մասամբ այդպիսի շինութիւններ դեղնագոյն աղիւսից են կապոյտ նշանակով։ Ներս մտէք, առէք տոմսակ և դէպի ներքև տանող սանդուխներից մէկով վայր իջէք։ Նոցանից մին տանում է ձեզ մի սրահ, որից կարող էք դէպի աջ երթալ. իսկ միւսը իջնում է հակհանդէպ գտնված սրահ, որտեղից կարող էք գնալ դէպի ձախ։ Քանի մի սաժէն ցած իջնելով վերջապէս կտեսնէք յանկարծ մի ընդարձակ սրահ։ Ձեր աջ և ձախ կողմերում խաւարի մէջ անհետանում են ստորերկրեայ ճանապարհի (տունէլի) անցքերը։ Ստորերկրեայ ճանապարհի օդի մէջ զգացվում է խանձահոտութիւն և ծուխ նոր գնացող շոգեկառքի։ Պատերը բոլորովին ծածկված և զարդարված են ամենատեսակ յայտարարութիւններով։ «Վիլլինգ անունով մէկը իրաւունք կապալով առած է յայտարարութիւններ կախելու երկաթուղիների, վագոնների և կայարանների վերայ։ Առանց նորա միջնորդութեան ոչ ոք չէ կարող յայտարարութիւն կախել։ Մեծ գումար հատուցանելով երկաթուղու ընկերութեանը նա ինքն ևս ժողովում է առատ տուրք։ Օրինակ, մեծագիր օրագիրների 6 կամ 7 խմբագրութիւնները հատուցանում են նորան իրաքանչիւրը

երեք հազար գրվանքա ստէրլինգ (մօտ 24 հազար մանէթ) տարեկան. «Քառակուսի, երկայնաձև, բոլորակ, կապոյտ, սպիտակ, նարնջագոյն, ատրագոյն, փոքրագիր և մեծագիր մի սաժէն երկարութեամբ մի արշինանոց տառերով, պատկերազարդ և անպատկեր. Նոքա կախված են բազմութեամբ դրեթէ մին միւսի վերայ. Բաւական է միայն նոցա նայել հասկացողութիւն ստանալու համար թէ ինչո՞վ է Լօնդօնը ներկայումս հետաքրքրվում, որտեղ է նա ուրախանում, ի՞նչ է կարդում, ի՞նչ է ուտում, ինչո՞վ է բժշկվում, ո՞րտեղ են ատամներ գնում և մազեր ներկում. Թատրոնները դուրս են բերում ժողովրդականութիւն ստացած դերասանների և դերասանուհիների պատկերները, նպարավաճառները կախում են համադամ կերակուրների ամենագրգռիչ և ախորժակաշարժ բազմատեսակ նկարներ, երկաթուղիները յայտարարում են գնացքների մասին թէ որտեղ վաճառահանդէս, համերգ, ձիարշաւ, ժողովներ և տօներ կան. Ահա մօտենում է գնացքը և հարկաւոր է շուտով նստել, որովհետև միայն մի րոպէ է կանգնում. Մինչև միւս կայարանը անցնում ենք մութ տունէլի մէջով և միայն տեղ տեղ հաստ պատերի կամ աւելի լաւ ասած գետնի կողերի վերայ տեսնում ենք պատուհաններ, սպիտակ, հարթ մի տեսակ ապակիով։ Դոքա լուսամուտներ են, օդաձիգներ, որոնք միացնում են ստորերկրեայ աշխարհը արտաքին աշխարհի հետ.

Ամեն կողմ մութ է, սև, հեղձամղձուկ, խոնաւ և մռայլ տեսարան է. Ոչ լոյս է երևում և ոչ մի փոքրիկ նշոյլ. Գերեզմանական մութ ու լռութիւն տիրած է և յանկարծ այս լռութեան մէջից լսվում է աւելի որոշ կերպով շոգեկառքի ձայնը. Գերօրինակ արագութեամբ սլանում ենք կամարների տակից և նոր կայարանի սրահին է մօտենում. Տունէլի մէջ, երկաթուղու վագօններում վառված լապտերների օգնութեամբ միայն կարելի է մի որ և իցէ բան տեսնել, իսկ այստեղ, ինչպէս և միւս սրահներում ձեզ կրկին լուսաւորում է ցերեկվան լոյսը. Այստեղ կարող էք կարդալ կայարանի անունը, որ դրոշմված է խոշոր տառերով պատերի վերայ քանի մի տեղ և կարող էք իմանալ թէ դուրս պիտի գաք թէ պիտի շարունակէք գնալ երկաթուղու հետ, որը ի հարկէ կրկին սկսում է սլանալ մի կամ երկու րոպէից յետոյ մինչև իւր նշանակված տեղը.

(Թարգմ.)

Ճեմ. Ե. դաս. աշ. Ա. Զ.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

(Ս. ՍՄԱՅԼՍԻՑ).

Բնաւորութիւնը աշխարհիս մէջ ամենամեծ շարժողուժերից մին է. Իւր ազնիւ արտայայտութիւններով նա ներկայացնում է մարդկային բնութիւնը իւր լաւագոյն ձևով, որովհետև նա ցոյց է տալիս մարդի ամենալաւ կողմը.

Այն մարդիկ, որոնք աշխատասէր, ճշմարտասէր, բարձր բարոյական և խիստ ազնիւ են, կեանքի ամեն դրութեան մէջ արդարև գերազանց են միւսներից, վայելում են ամենքի և իւրաքանչիւրի ակամայ յարգանքը. Շատ